ՏԱՐՈՆԻ ԻՆՆԱԿՆՅԱ ՎԱՅՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՇԱԳՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԱՆ

Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» երկում խոսվում է հնդկաց թագավորից հալածված Դեմետր և Գիսիանե եղբայրների մասին, որոնք, Հայաստան գալով, դիմում են Վաղարշակ արքային և նրա կամքով հաստատվում Տարոնում: Այստեղ նրանք Վիշապ անունով քաղաք են հիմնում, այնուհետև գալով Աշտիշատ մի կուռք են կանգնեցնում, որ հնդիկներն էին պաշտում: Տասնհինգ տարի հետո Վաղարշակը սպանում է եղբայրներին և իշխանությունը հանձնում նրանց երեք որդիներին՝ Կուառին, Մեղտեսին և Հոռին: Կուառը շինում է Կուառս ավանը, Մեղտեսը՝ Մեղտին, Հոռը՝ Հոռեանսը: Վերջիններս Քարքե լեռան վրա կանգնեցնում են Դեմետր և Գիսիանե կուռքերի արձանները: Գիսիանե աստվածը, ըստ Հովհանի, գիսավոր էր: Այդ պատճառով նրա սպասավոր քրմերը երկար մազեր էին պահում: Դեմետրի պաշտամունքի բլուրը կոչվում էր «Արևու բլուր»: Քրմերի մասին ասվում է, թե նրանք սև էին և դաղրատեսք, «զի ցեղով ի հնդկաց էին»: Գրիգոր Լուսավորիչն իր զորքով նրանց վրա է արշավում Պալունյաց ավանի Կուառս գյուղաքաղաքում, ուր կատաղի մարտեր են տեղի ունենում: Հարձակվողները Տարոնի Իննակնյա վայրում կործանում են հեթանոսական սրբատեղին ու դրա տեղում կառուցում Ս. Կարապետ եկեղեցին[1]:

Ագաթանգեղոսը Քարքե լեռան աստվածներին այլ անուններով է ճանաչում: Նրա հաղորդմամբ, այստեղ են գտնվել Վահագնի Վահեվանյան մեհյանը, ինչպես նաև Անահիտ և Աստղիկ դիցուհիների բաղինները[2]: Գ. Խալաթյանը, հաշվի առնելով, որ Հովհան Մամիկոնյանը Տարոնում չի հիշատակում այնպիսի նշանավոր սրբավայրեր, որպիսիք Վահագնինն ու Անահիտինն էին, կարծիք է հայտնել, որ Դեմետրի և Գիսիանեի պաշտամունքը հենց այդ աստվածներին է վերաբերել[3]: Ա. Հմայակյանն այս փաստարկման օգտին ևս մեկ մանրամասն է հավելել. ըստ Հովհան Մամիկոնյանի, քրմական զորքին հաղթելուց հետո Իննակնյա վայրում տեղավորում՝ են Ս. Հովհաննես (Կարապետ) և Աթանագինես նախավկայի նշխար-

---

[1] Յ ո վ հ. Մ ա մ ի կ ո ն ե ա ն. Պատմութիւն Տարօնոյ. Երևան, 1941, էջ 97–98, 107-110, 120, 79–85, 100:

[2] Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս). Թիֆլիս, 1914, § 809:

[3] Գ ր. Խ ա լ ա թ ե ա ն. Զենոբ Գլակ. Համեմատական ուսումնասիրութիւն. Վիեննա, 1893, էջ 26–27:

ները, իսկ ըստ Ագաթանգեղոսի, դրանք թաղվում են Քարքե լեռան լանջին՝ Վահեվանյան մեհյանից ոչ հեռու[4]:

Ղևոնդ Ալիշանի կարծիքով, հնդիկ իշխաններին հյուրընկալած Վաղարշակ արքան Վահագնի՝ Քարքե լեռան սնարին գտնվող Վահեվանյան մեհյանի քրմությունն իրականում հանձնած է եղել Վահունիներին, Վահեվունիներին՝, որոնք, ըստ Խորենացու, Վահագնի մեհյանի սպասավոր քրմերն էին և Վահագնին համարում էին իրենց նախնին: Երբ Արշակունի Արտաշեսը՝ Վաղարշակ արքայի թոռը, Ասիայից Հայաստան է տեղափոխում Հերակլեսի արձանը, Վահունիները նրան որպես Վահագն ճանաչելով՝ կանգնեցնում են Տարոնի Աշտիշատում: Արտաշեսն Ասիայում գտնում և Հայաստան է բերել տալիս նաև Ապոլոնի ու Արտեմիդ-Արտեմիսի արձանները, որոնք Վահունիները կանգնեցնում են Արմավիրում, ուր Վաղարշակ արքան նախկինում կառուցել էր Արեգակի և Լուսնի տաճարները[6]:

Ալիշանն ուշադրություն է հրավիրել ոչ միայն այն հանգամանքի վրա, որ Դեմետրի տաճարի տեղանքը «Արևու բլուր» է կոչվել, այլև այն բանի, որ Քարքեի դիմաց գոյություն է ունեցել ևս մեկ բլուր՝ Արեգակնածագ անվամբ, ուր Անահիտ դիցուհու պատկերն է դրված եղել[7]:

Տարոնի Իննակնյա վայրում Արև աստծո պաշտամունքի մասին է վկայում նաև քրմական ղորքը ղեկավարող Արձան քրմապետի սպառնալիքը՝ ուղղված Գրիգորի բանակին. «Ո՞չ գիտեք, զի այսաւր մնայն Գիսիանէ... հարկանելոց է զձեզ կուրութեամբ և մահուամբ»[8]: Կուրությամբ կարող էր պատժել Արեգակն իր ասեղնասուր ճառագայթներով, ինչպես հայկական ավանդություններում[9]: Գիսիանեի երկար վարսերը նույնպես Արևի ճառագայթներն են խորհրդանշել. Արևը հայկական ավանդության մեջ, ծեգին, լեռան ետևից նախ իր հրեղեն վարսերն է ցույց տալիս, հետո նոր բարձրանում երկնակամար[10]: Հատկանշական է, որ ալաշկերտցիները, երբ մանուկների գլուխը խուզել են, գլխի վրա կլոր մաս են թողել, որ կոչվել է «կալ» և համարվել Արևին համարժեք[11]: Հովհան Մամիկոնյանը Տարոնում Գիսիանե աստծուն փոխարինած Ս. Կարապետին նույնպես բնութագրում է իբրև գիսավոր. «...այր մի գիսաւոր... ելեալ յեկեղեցոյն...»[12]: Մինչև նորագույն ժամանակներն էլ Ս. Կարապետ եկեղեցին հայտնի է եղել «Մշո ծամ» անունով[13], որը հիշեցնում է Գիսիանեի անվան «գես» արմատը: Տարոնի պատերազմի վեպում, ինչպես նկատում է Մ. Աբեղյանը, Ս. Կարապե-

---

[4] Ս. Գ. Հ մ ա յ ա կ յ ա ն. Կուեռա-Կուառ աստվածությունների պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում.– «Պատմա-բանասիրական հանդես», 1990, №1, էջ 155:

[5] Ղ և ո ն դ Ա լ ի շ ա ն. Հին հավատք կամ հեթանոսական կրոնք Հայոց (այսուհետև՝ Ա լ ի շ ա ն). Վենետիկ, 1895, էջ 295–297:

[6] Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Խ ո ր ե ն ա ց ի). Թիֆլիս, 1913, Բ, Ը, ԺԲ:

[7] Ա լ ի շ ա ն, էջ 268:

[8] Յ ո վ հ. Մ ա մ ի կ ո ն ե ա ն. Նշվ. աշխ., էջ 85:

[9] Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում. Երևան, 1969, էջ 5–7:

[10] Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց. Երկեր. հ. I, Երևան, 1978, էջ 76–77:

[11] Էմինեան աղդագրան ժողովածու. հ. Ա, Մոսկուա–Ալեքսանդրապոլ, 1901, էջ 203:

[12] Յ ո վ հ. Մ ա մ ի կ ո ն ե ա ն. Նշվ. աշխ., էջ 154-155:

[13] Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր. հ. Ա, Երևան, 1966, էջ 299:

սի անվան ներքո Դիսիանեն է կոչվում պարսից զորքերի դեմ[14]. «...Եւ յանկարծակի տեսին այր մի գիսաւոր, որ լոյս փայլէր ի հերայ նորա, եւ պաշս թշնամեացն կուրացուցանէր»[15]: Կամ. «Եւ կնքեալ զանձինս իւրեանց՝ գիմեցին ի վերայ պարսից: Եւ երեւեցաւ նոցա ի պատերազմին այր մի ահեղ և լուսաւոր, եւ հեր նորա լոյս փայլատակէր, զոր տեսեալ Վահանայ և գիտացեալ, թէ Կարապետն է»[16]:

Դեմետր աստծո անունն Աբեղյանը կապում է հունական Դեմետրայի[17] հետ, որը հողի արգավանդության, պտղավորման աստվածուհին էր և շրջում էր վիշապ լծած կառքով[18]: Հատկապես հացագործության հովանավոր էր ճանաչվում: Նա Էլևսինի արքայի որդի Տրիպտոլեմոսին ցորենի սերմ էր տվել, սովորեցրել երկրագործությունն և օրհնել նրա հերկած դաշտը, որն առատ բերք էր պարգևել[19]: Հույները նրա կամ Արտեմիս – Լուսնի աստղային համարժեքը երկնքում համարում էին Կույս համաստեղությունը[20]: Աստղային հին քարտեզներում Կույսը պատկերվում է կնոջ տեսքով՝ մի ձեռքին դափնու ճյուղ, մյուսին՝ հասկերի փունջ: Կույսի ամենապայծառ «ալֆա» աստղը «սպիկա» անունն է կրում, որը լատիներեն հասկ է նշանակում: Մոտակայքում չկա «սպիկա»-ից ավելի պայծառ աստղ[21], ուստի, անհավանական չէ, որ հնում այն աստվածացված լիներ՝ հանձին Դեմետրայի: Հունական արվեստում էլ Դեմետրան գլխին հասկերից հյուսված թագով կամ պսակով էր պատկերվում: Հատկանշական է, որ եվրոպական շատ երկրներում մինչև նորագույն ժամանակները հասկերից տիկնիկներ էին պատրաստում և անվանում Կույս[22]: Եթե Քարքե լեռան վրա պաշտված Կույս համատեղությունն է, որ Դեմետր անվամբ հիշատակվում է «Պատմութիւն Տարօնոյ»-ում, իսկ Ագաթանգեղոսը տալիս է նրա Անահիտ անունը՝ Վահագնի և Աստղիկի հետ միասին, ապա խիստ հետաքրքրական է, որ Կ. Մելիք-Փաշայանը, հայոց մեջ Մայր աստվածուհու պաշտամունքի մասին խոսելիս, մեջբերում է «Օխոտ անուն Անահիտ» կոչվող մի ավանդություն, ուր Անահիտը պարզապես լուսնային բնութագրով է ներկայանում. «Մեծամայր ինքը մահն է (լուսին), իրենից է ցայտում Լուսնթակի շողքերը, գիշերը մինչև լույս ինքն է լուսավորում ամբողջ աշխարհը»[23]:

Ինչ վերաբերում է Վահագնին, ապա հայկական միջնադարյան գրավոր աղբյուրներում նրա անունն իբրև Արեգակ է ըմբռնվում: «Տօնական մատեան» ձեռագրում անանուն հեղինակը հիշել է. «Ոմանք զարեգակն պաշ-

---

[14] Նույն տեղում, էջ 321:

[15] Յ ո վ հ. Մ ա մ ի կ ո ն ե ա ն. Նշվ. աշխ., էջ 218–219:

[16] Նույն տեղում, էջ 264:

[17] Հունարեն՝ Դեմետեր, որ ստուգաբանվում է՝ «Մայր երկիր» – "Мифы народов мира" (далее – МНМ). Т. I, М., 1991, с. 364–365.

[18] Մ. Ա բ ե ղ յ ա ն. Նշվ աշխ., էջ 229:

[19] А п о л л о д о р. Мифологическая библиотека. Л., 1972, с. 8-9.

[20] А. Б о н о в. Мифы и легенды о созвездиях. Алма-Ата, 1985, с. 98-99; А. С а п л и н. Астрологический энциклопедический словарь. М., 2001, с. 152.

[21] Ս. Ն ե ր ս ի ս յ ա ն. Աստղալից երկինք. Երևան, 2000, էջ 89, 91:

[22] Ջ. Ֆ ր ե զ ե ր. Ոսկե ճյուղը. Երևան, 1989, էջ 462–483:

[23] Կ. Վ. Մ ե լ ի ք - Փ ա շ ա յ ա ն. Անահիտ դիցուհու պաշտամունքը. Երևան, 1963, էջ 68:

տեցին և Վահագն կոչեցին և այլք՝ զլուսին և Արտեմիս ձայնեցին»[24]: Փիլոն Եբրայեցու (V դ.) «Վասն տասնաբանեան օրինաց» գրվածքի հայերեն թարգմանության մեջ ասված է. «Քանզի կոչեն ոմանք... զհուր Հեփեստոսն և արեգական զՎահագն»[25]: Վահագնը փոխարինում է բնագրի «Ապոլոն» անվանը, որը նույն թարգմանությամբ հանդիպում է հին հայկական այլ ձեռագրերում ևս[26]: Ապոլոնին որպես Վահագն ճանաչելով՝ երկրպագել են նաև Վահունիներն Արմավիրի Արեգակի տաճարում:

Ըստ Մովսես Խորենացու, Վահագնի մասին երգել են «Նմանագոյնս զՀերակլեայ նահատակութիւնսն»[27]: Այսինքն՝ հայերը նրան նմանեցրել են հունական Հերակլեսին, որի համաստեղությունն աստղային երկնքում հայտնի է հռոմեական Հերկուլես ձևով (ի դեպ, հետաքրքիր է, որ այս աստեղտանն է գտնվում երկնոլորտի անցյալ դարում հայտնաբերված «ապեքս» երևակայական կետը, որի ուղղությամբ է շարժվում Արևը՝ 20 կմ/վ արագությամբ[28]):

Հայտնի է, որ ուսումնասիրողները «Պատմութիւն Տարօնոյ»-ում շարադրված մեզ հետաքրքրող սյուժեի մի հեռավոր արձագանքը համարում են Կիևի հիմնադրման մասին ռուսական զրույցը, որը պատմում է, թե ինչպես Կիյ, Շչեկ և Խորիվ անուններով երեք եղբայր իրենց քրոջ՝ Լիբեդի հետ գալիս են պոլյանական ցեղերի հողը, նստում երեք լեռների վրա, այնուհետև իրենց ավագ եղբոր՝ Կիյի պատվին կառուցում Կիև քաղաքը[29]: Այս ավանդության մեջ բացակայում են միայն երեք եղբայրների ծնողները (Դեմետրը և Գիսիանեն), սակայն դրա փոխարեն հիշատակվում է եղբայրների քույրը՝ Լիբեդ անվամբ: Ն. Մառը ռուսերեն «лыбедь»-ի հայերեն «կարապ» ձևը պահպանված է համարել Ս. Կարապետի անվան մեջ, որի տաճարը կառուցվել էր Իննակնյա վայրի կործանված նախաքրիստոնեական սրբավայրի տեղում[30]: Անկախ այն հանգամանքից, թե հին ռուսերենում ինչ իմաստով է գործածական եղել «лыбедь» արմատը, միևնույն է, անգամ ժողովրդական ստուգաբանության մակարդակում Մառի անցկացրած «лыбедь-лебедь» (կարապ) զուգահեռը որոշ վերակազմությունների հիմք է տալիս:

Աստղային երկնքի հյուսիսային կիսագնդում Կարապ համաստեղությունը Հերկուլես-Վահագնի մոտ է, նրանց բաժանում է ընդամենը Քնարը: Սակայն հույները Կարապն ու Քնարը պատկերացրել են միևնույն առասպելության համատեքստում: Հունական առասպելներից մեկը պատմում է հայրենիքից վտարված սպարտացի Տինդարեոսի մասին, որը թափառում է

---

[24] Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ Բառգիրք). հ. II, Երևան, 1981, էջ 771:

[25] Մ. Ա բ ե ղ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 75:

[26] Исследования и статьи Н. О. Эмина по армянской мифологии, археологии, истории и истории литературы (за 1858-1884 гг.). М., 1896, с. 81.

[27] Խ ո ր ե ն ա ց ի, Ա, ԼԱ:

[28] А. Б о н о в. Նշվ. աշխ., էջ 117, Ս. Ն ե ր ս ի ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 49–50:

[29] «Повесть временных лет», ч. 1, подготовка текста Д. С. Лихачева. Перевод Д. С. Лихачева и Б. А. Романова. М.—Л., 1950, с. 12-13.

[30] Н. М а р р. Книжная легенда об основании Киева на Руси и Куара в Армении. Заметки по яфетическим клинописям.— "Известия Российской академии истории материальной культуры", III, № 11—12, 1924, с. 274, 278.

աշխարհով մեկ և ի վերջո հյուրընկալվում Էտոլիայի արքայի մոտ: Արքան նրան կնության է տալիս իր դստերը՝ Լեդային: Զևսը կարապի կերպարանք առած, կենակցում է նրա հետ: Հենց այդ կարապն էլ աստղային երկնքում մարմնավորում է Զևսին[31]: Կարապը Քնարի հետ է կապում հաջորդ առասպելը, որը հռչակավոր երգիչ Օրփեոսի և նրա կնոջ՝ հրաշագեղ Էվրիդիկեի մեծ սիրո մասին է: Էվրիդիկեն, օձից խայթված, հանդերձյալ աշխարհ է իջնում, սակայն Օրփեոսը չի կարողանում դուրս հանել նրան այնտեղից: Օրփեոսը ծիսական զոհաբերությունը չարիք էր համարում և չէր մեծարում Դիոնիսոսին, բայց պաշտում էր Արևին, որին Ապոլոն էր անվանում: Այդ պատճառով էլ Դիոնիսոսը նրա դեմ է հրահրում բաքոսուհիներին, որոնք երգչին գլխատում են Ապոլոնի տաճարում, իսկ գլուխը շպրտում Հեբրոն գետը: Աստվածներն Օրփեոսին Կարապ համաստեղության են փոխակերպում, իսկ նրա երաժշտական գործիքը՝ Քնարի[32]: Երրորդ առասպելը հիշատակում է միայն Քնար համաստեղությունը՝ համարելով, որ դա Ապոլոնի տավիղն է, որ նա թողել է երկնքում[33]:

Ինչպես տեսնում ենք, հունական առաջին երկու առասպելները Կարապ համաստեղությունը դիցաբանական երկու տարբեր կերպարների հետ են կապում (Զևս և Օրփեոս): Սակայն երկուսում էլ սիրատածման մոտիվի ընդհանրությունից դժվար չէ կռահել, որ դրանք աստղային մի նախնական առասպելության ուշ տարբերակներն են: Զևսի և Օրփեոսի ետևում մեկ աստվածություն է կանգնած եղել, որի հետագա փոխակերպումներից է նաև Ապոլոնը, քանի որ Քնարը նաև նրա երաժշտական գործիքն է[34]:

Երեք առասպելի հետքերն էլ նկատելի են թե՛ հայկական, թե՛ ռուսական ավանդության մեջ: Նախևառաջ ուշադրություն է դրավում վտարանդիության մոտիվը, որը պահպանել են նաև հույները՝ Տինդարեոսի մասին պատմելով: Վտարանդի աստվածներից մեկը սկզբնական առասպելում, ըստ երևույթին, իդեական սեռի է եղել, որի հետ սիրային կապ է հաստատել ինչ-որ աստված: Այն փաստը, որ հունական առասպելը Կարապ համաստեղությունը կապում է Օրփեոսի հետ՝ ամրապնդում է Մառի տեսակետն այն մասին, որ Տարոնում քրիստոնեական Ս. Կարապետի նախակերպարը կարասն է եղել, քանի որ Ս. Կարապետն էլ հայոց մեջ դուսանների հովանավորի համարում ուներ[35]: Նա Նոր Կտակարանի Հովհաննես Մկրտիչն է, որին բանտարկել էր Հերովդես Թագավորը: Հովհաննեսն այպանում էր Հերովդեսին՝ նրա եղբոր կնոջը՝ Հերովդիային «ունենալու» համար: Մի օր Հերովդիայի աղջիկը, մորից խրատված լինելով, պահանջում է Հովհաննեսի գլուխը՝ սկուտեղի վրա: Թագավորը կատարում է նրա կամքը[36]: Այստեղ ակամայից հարց է ծագում. արդյոք Տարոնի նախաքրիստոնեական պաշտամունքին հայտնի չի՞ եղել կանանց ձեռքով գլխատված Օրփեոսի ա-

---

[31] А. Б о н о в. Նշվ. աշխ., էջ 137: Р. Г р е й в с. Мифы Древней Греции. М., 1992, с. 162.

[32] МНМ, т. II, М., 1992, с. 262-263, А. Б о н о в. Նշվ. աշխ., էջ 137–139: Р. Г р е й в с. Նշվ. աշխ., էջ 80–81:

[33] А. Б о н о в. Նշվ. աշխ., էջ 139:

[34] Առասպելի այլ տարբերակում Օրփեոսն Ապոլոնի որդին է (МНМ, т. II, с. 262):

[35] Մ. Ա բ ե ղ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 299:

[36] Մ ա ա թ ե ո ս, գլ. ԺԴ, 1-12:

ռասպելին զուգահեռ մի առասպել[37], քանի որ քրիստոնեական ավանդույթը նրան համադրել է գլխատված Հովհաննես Մկրտչին: Թվում է՝ այո, և հենց այդ ավանդույթի ուժով է, որ Գրիգոր Լուսավորիչն արգելել է կանանց մուտքը Ս. Կարապետ եկեղեցի[38]:

Կարապ համաստեղության ետևում կանգնած երգիչ աստվածությունն այնքան սիրված է եղել ժողովրդի մեջ, որ նրա մասին հուշը սերնդեսերունդ պահպանվել է Հազարան բլբուլի մասին հեքիաթների շարքում: Այդ թռչունը հիշվում է «Հազարան բլբուլ»[39], «Պիլպուլ հազարի»[40], «Հազարենց բլբուլ»[41], «Հազարան բիլբուլ»[42], «Հազարաբիլբուլ»[43] ձևերով: Նրա երգից արտասվում է ամբողջ բնությունը: Այդպիսի կարողություն միայն Օրփեոսն ուներ, որի երգից ծառերը դադարում էին սոսափել, իսկ ժայռերն ու լեռները սկսում էին շարժվել[44]: Նա Կարապ համաստեղությունն է և կարապ թռչունը, որ հայտնի է իր աղիողորմ երգով՝ մեռնելուց առաջ[45]: Այնտեղից, ուր Հազարան բլբուլն է գտնվում, մարդիկ ետ չեն գալիս՝ քարանում են, երբ հավքի «մաշուղը» սկսում է զրուցել նրանց հետ: Բայց հավքն ինքն էլ կարող է քարացնել, եթե իրեն կանչողին «չոռ» ասի: Ում հաջողվում է նրան բերել, չպետք է շրջվի և պատասխանի իր ետևից հնչող ձայներին: «Քար ու փետ» հերոսի ետևից գոչում են. «Հողեղեն տարավ զհրեղեն»: Եթե հերոսը ետ նայի, ապա կքարանա: Քարանալ,

---

[37] Ուսումնասիրությունը շարունակելով, եկանք այն համոզմանը, որ Տարոնի Իննակնյա վայրի պաշտամունքին քաջ հայտնի է եղել օրփեոսյան (Դեմետ(ե)ր - Դիոնիսոս - Ապոլոնյան) առասպելաբանությունը, ինչն արտահայտված է նաև Վանի թագավորության դիցաբանում՝ ավելի վաղ, քան մ.թ.ա. VI դ. կծագեին օրփեոսյան հիմները:

[38] Յ ո վ հ. Մ ա մ ի կ ո ն ե ա ն. Նշվ. աշխ., էջ 100:

[39] Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ). հ. I, Երևան, 1959, էջ 27:

[40] ՀԺՀ. հ. XIII, Երևան, 1985, էջ 147:

[41] ՀԺՀ. հ. XII, Երևան, 1984, էջ 138:

[42] ՀԺՀ. հ. XI, Երևան, 1980, էջ 121:

[43] ՀԺՀ. հ. IX, Երևան, 1968, էջ 13 :

[44] МНМ, т. II, с. 262. А п о л л о д о р. Նշվ. աշխ., էջ 6: А п о л л о н и й Р о д о с с к и й. Аргонавтика. Перевод, введение и примечания Г. Ф. Церетели. Тбилиси, 1964, I, 26-27.

[45] Հազարան բլբուլն արական սեռի է, որից սեր է ակնկալվում ոսկեծամ աղջկա համար, ում հուշում են. «...քզիկ պետք է Պիլպուլ հազարի օր զարկե ու կանչե, դու լե սեր էնիս»: Ոչ ոք չի կարող տիրանալ նրան, բացի այդ աղջկանից: Աղջիկը կանչում է. «Պիլպուլ հազարի, կանաչ զընտարի (?), զաստված օր կսիրես՝ դուն ելի ու արի»: Բլբուլը «ջան» ասելով, դուրս է գալիս պալատից և հետևում աղջկան: Թագավորի աղջիկն ու Պիլպուլ հազարին հասնում են իրենց «մուրատին» (մուրազին): Մի հեքիաթում հավքի տերն աղջիկն է, որ քնած է նրա սենյակում: Այլ սյուժեում նրան հսկում է իր «մաշուղը», ինչն Ալաշկերտի բարբառում (որով գրի է առնված հեքիաթը) սիրուց գերված, սիրուց տարված է նշանակում (ՀԺՀ. հ. IX, էջ 633):

Բլբուլը երգիչ է, որի «զարկելն» ու «կանչելը», ինչպես կարելի է կռահել, հասկացվում է նրա երաժշտական գործիքն ու երգելը: Նա «անուշմ» կարդում է, և դրանից այգու ինձորները բուրավետ են դառնում: Իսկ «կարդալը», ասել ասելը, ժողովրդական մտածողությամբ նույնն է՝ ինչ երգելը: Երբ թագավորի երրորդ որդին բերում է Հազարաբիլբուլին և նրա «մաշուղին», վերջինիս պատգամով, հավքը երգում է. «Էտ Հազարաբիլբուլ ուր բերան բացեց, հազար թուռլու լիգու թափեց, օր սար ու քար լային էտոր ձինեն»: Ալաշկերտի բարբառով «հազար թուռլու» հազար տեսակ է նշանակում (ՀԺՀ. հ. IX, էջ 630): Ուստի, «Հազարաբիլբուլ» ասելով, նկատի է առնվում «բլբուլը» (երգիչը), որը հազար տեսակ երգ է իմացել, այդ թվում՝ սիրային, քանի որ Ալաշկերտի, Մուշի, Բաղեշի, Մանազկերտի բարբառներում «հազ էնել» նաև սիրել, ուզել է նշանակում (ՀԺՀ. հ. XIII, էջ 632): Ժողովրդական ստուգաբանությամբ, համադրվել են «հազար տեսակ երգ»-ն ու «հազ էնել»-ը:

անշուշտ, մեռնել է նշանակում, իսկ քարը մեռյալի շիրիմին է դրվում: Հերոսն իրավունք չունի հանդերձյալ աշխարհում (որտեղից չեն վերադառնում) ցույց տալ, թե լսում է իր ետևից հնչող ձայները կամ տեսնում է ձայնողներին, որովհետև կմատնի իր ով լինելը: Ո՞է որ մեռածներն այնաշխարհային են. չեն տեսնում և չեն լսում մեր աշխարհի էակներին, ինչպես նաև վերջիններս չեն տեսնում նրանց: Երբ Օրփեոսի սիրելի Էվրիդիկեին խայթում է օձը, և նա իջնում է հանդերձյալ աշխարհ, նրա ետևից մեռածների մոտ ուղևորվող Օրփեոսի առջև էլ Հադեսը նույն պայմանն է դնում՝ չշրջվել և ետ չնայել, այլապես կկորցնի կնոջը[46]:

Իննակնյա վայրի պաշտամունքում նկատելի է հելլենական դիցաբանության ներկայությունը, ինչի մասին վկայում է նաև լուսնային աստվածության հունականացված Դեմետ(ե)ր անվանաձևը: Սակայն Դեմետրի անվան ներքո Տարոնում երկրպագել են Անահիտ-Լուսնին, որի անունը հայոց մեջ երբեմն Ապոլոնի քույր Արտեմիս-Լուսնի փոխարեն էր դործածվում[47]: *Ագաթանգեղոսի Պատմությունից էլ երևում է, որ Անահիտ դիցուհու պաշտամունքը պատմական որոշակի շրջանում, հատկապես Տրդատ III-ի օրոք, հունահայկական դրսևորում է ունեցել. Տրդատ արքան Գրիգոր Լուսավորիչին հորդորում է մեծարել Անահիտին, որին բոլոր թագավորներն են պաշտում, հատկապես հույների թագավորը*[48]:

Իսկ Ապոլոնի բազմաթիվ մարմնավորումներից մեկում հունական դիցաբանությունը Արևին էր ճանաչում, որն իր նետ-ճառագայթներով խոցում էր թշնամիներին[49], *ինչպես Տարոնի պատերազմում Գիսիանեի իրավահաջորդ Ս. Կարապետն էր իր ճառագայթներով խոցում պարսից զորքը: Անահիտ-Դեմետր-Արտեմիսի արական զուգորդը, ինչպես ասացինք, Վահագն-Գիսիանե-Արևն էր, որի անունը հայերը համարժեք էին համարում հունական Ապոլոնին:*

Արևն ու Լուսինը հայկական ավանդություններում քույր և եղբայր են, որոնց փոխհարաբերություններում նկատելի են երկվորյակների առասպելույթի հետքերը: Նրանք հակասության մեջ են, քանի որ չեն ուզում գիշերը հերթապահել: Մրցակցում են, թե ով առաջինն աղբյուրից

---

[46] МНМ, т. II, с. 262; А п о л л о д о р. *Նշվ. աշխ., էջ 6–7: Կարապ-Օրփեոսն էլ աստղային երկնքում հանդերձյալ աշխարհի տիրույթներում է գտնվում՝ մեռնելուց հետո: Հեքիաթները նույնպես, հին ավանդույթի ուժով, ճշտորեն նկարագրում են Հազարան բլբուլին և նրա հարևան համաստեղությունները. «քոչկի» (սլալատի) վերին հարկում հավքն է գտնվում, ներքին հարկում՝ ձիեր կան Պեգաս և Փոքր Ձի համաստեղությունները, որոնք հարավում («ներքին հարկում») կարապի անմիջական գրկիցներն են: Հերոսը հավքին կարողանում է տիրանալ միայն 40 գլխանի գևի (վիշապի) օգնությամբ, որ հյուսիսից Կարապի հարևան Վիշապ համաստեղությունն է: Հազարան բլբուլին ծեր թագավորին ջահելացնելու կամ նրա այպին (ուր ջահելացնող խնձորենի է աճում) կանաչացնելու շնորհ է վերասահվում: Հեքիաթների խնձորենին՝ Կենաց ծառը, ինչպես նկատել է Էրիխ Ցերենը, Մեր Կաթինն է՝ իր աստղ-խնձորներով* (Э. Ц е р е н. Лунный бог. М., 1976, с. 118-120, 130): *Կարապ համաստեղությունն ամբողջապես Մեր Կաթնի մեջ է գտնվում: Հազարան բլբուլին գուշակելու կարողություն է վերագրվում, ինչպես Լեսբոսում Օրփեոսի գլխից էին գուշակություն ակնկալում* (МНМ, т. II, с. 262-263. Р. Г р е й в с. *Նշվ. աշխ., էջ 81)*:

[47] *Բառգիրք. հ. II, էջ 771:*

[48] *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, § 53:*

[49] МНМ, т. I, с. 93-94, 108. Р. Г р е й в с. *Նշվ. աշխ., էջ 58,* А. Л о с е в. Античная мифология в ее историческом развитии. М., 1975, с. 302, 327.

ջուր կրերի՝ մոր օրհնանքը ստանալու համար. Արևը դավադրում է Լուսնին՝ նրա կուժը ծակելով: Եղբայր Լուսինն արյունապղծության ձգտում ունի քույր Արևի նկատմամբ[50]: Քանի որ հայկական ավանդության մեջ Արևի և Լուսնի սեռերը փոփոխական են, ուստի չի բացառվում, որ այդպիսի ձգտում վերագրված լիներ նաև Արևին: Թվում է, որ այս հանգամանքը ևս պետք է որ լուրջ պատճառներից մեկը եղած լիներ Տարոնում Ս. Կարապետի պաշտամունքը հաստատելու համար՝ հաշվի առնելով այն, որ վերջինս դատապարտում էր արյունապղծությունը Հերովդեսի և նրա եղբոր կնոջ միջև:

Տարոնի Աշտիշատում Գիսանե-Վահագնի և Դեմետր-Անահիտի բագինները պետք է որ աստղային երկնքում Արևի ասեղատուն Հերկուլեսի և Լուսնի ասեղատուն Կույսի երկրային համարժեքն ընկալված լինեին: Իսկ Կարապ համաստեղության մասին Օրփեոսի և Եվրիդիկեի առասպելին մոտ ինչ-որ վեպ է պատմվել: Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ Մեծի զորակցությամբ հեթանոսական մեհյանները կործանելով, հաստատել է Ս. Կարապետի պաշտամունքը, որի մասին ավանդվող ավանդույթյան պատմությունը մոտ է եղել հեթանոսական առասպելին[51]:

Համաստեղությունների աստվածների աստեղտներ են ըմբռնված նաև Վան քաղաքից ոչ հեռու, Անձավ կոչված վայրում բիայնական ամրոցից 1995 թ. հայտնաբերված վահանի մնացորդներում, ուր շրջանաձև պատկերված են աստղ-վահան բռնած աստվածներ: Նրանք հալածում են առաքյան զորքին[52]: Աստվածներից յուրաքանչյուրը կանգնած է թևավոր, առջևի ոտքերը կարճ, իր կենդանու վրա, ինչն այդ կենդանու ցամկին գելը վեր պահելու պատրանք է հաղորդում: Կենդանիների շարքում պարզորոշ նկատվում են Առյուծ, Ցուլ, Պեգաս, Աղեղնավոր, Կենտավրոս համաստեղությունները: Որոշ կենդանիներ համաձուլված են ներկայացնում: Այսպես, պատկերված է օձնակ մի արարած, որն ունի ցլի գլուխ, առյուծի իրան և կարիճի (Կարիճ համաստեղության) պոչ: Նրա ետևից գալիս է մեկ ուրիշը, որի իրանը դարձյալ առյուծի է, սակայն այծի գլխով (Այծեղջյուր համաստեղությունը) և ցլի պոչով: Նրան հետևող կենդանու իրանի վրա ձկան թեփուկներ են և ձկան պոչ (Ձկներ համաստեղությու-

[50] Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 5-7:

[51] Հետաքրքիր է, որ ազգագրագետ Գ. Վարդումյանը և ժայռապատկերագետ Կ. Թոխաթյանը հայկական միջնադարյան մատենագրությունից մեկուսված Տրդատի խոյի և սրի վերաբերյալ զուգորդումները կապել են աստղերի հետ [Գ. Վ ա ր դ ո ւ մ յ ա ն, Կ. Թ ո խ ա թ յ ա ն. Հայոց լեռնաշխարհի պաշտամունքները՝ ըստ ժայռապատկերների և ազգագրական նյութերի).– «Բազմավէպ», 2002, N 1-4, էջ 393–394]. Սակայն հեղինակները չեն կոնկրետացրել, որ այդ խոյը խոյի սեռք ունեցող Կարապ համաստեղությունն է: Ահա նրանց մատնանշած տվյալները. Վարդան Վարդապետի «Աշխարհացոյց»-ում Տրդատ Մեծի թուրը հավլուսի է. «Անդ կայ Հուշհայանի թուրն Տրդատայ... Եւ առեալ գթուրն օձեաց որպէս գխոյ» [Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի (բնական հրատ.՝ Հայկ Պէրպէրեանի). Փարիզ, 1960, էջ 22]: Ըստ Հակոբ Կարնեցու, այդ թուրը կախված է ողբ. «անդ կախեալ կայ յոյն Հուշհայլի թուրն Տրդատայ, զոր խոյ ձևացեալ Գրիգոր (Լուսավորիչ – Գ. Մ.)», (Յ ա կ ո վ բ Կ ա ր ն ե ց ի. Տեղագիր Վերին Հայոց. Վիշապակարան մէջ գաւառ. Վաղարշապատ, 1903, էջ 13): Ըստ Մովսես Խորենացու, աստղերից բաղկացած մի այդպիսի խոյ երևում է Հռոմի Կոստանդիանոս կայսրը՝ երազում ճակատամարտի պատերազմվելուց առաջ. «խոյ աստեղեայ յերկնից պարունակեալ զլով, ասէ «Այսու յաղթեա». զոր տեսեալ սիրեցեալ (նշանով – Գ. Մ.) եւ ամենեքեան յաղթեաց պատերազմացն» (Խ ո ր ե ն ա ց ի, Բ, ՁԳ):

[52] O. B e l l y. The Anzaf Fortresses and the Gods of Urartu. Istanbul, 1999, figure 17

նը), գլուխն արծվի է (Արծիվ համաստեղությունը) և այլն: Աստվածների շարքը վերևից և ներքևից պատված է իրար հաջորդող սև ու սպիտակ տերևներով: Իսկ դրանք հին հայոց աշխարհայացքում օրերի (գիշերվա և ցերեկվա) խորհրդանիշն են համարվել՝ Կենաց ծառի վրա, ինչպես դա արտահայտված է հայկական հանելուկներում[53]: Կլոր վահանը նույնպես ժամանակն է մարմնավորում, քանի որ հնում ժամանակը պատկերացրել են շրջանի կամ անիվի նման՝ անսկիզբ և անվախճան[54]:

Նշանակում է՝ բիայնական վահանը պատկերել է ժամանակը և աստվածներին (հավանաբար, յոթ թավառող մոլորակներին, այդ թվում՝ Արևին և Լուսնին)՝ յուրաքանչյուրն իր համաստեղության կամ համաստեղությունների մեջ: Դրանց օգնությամբ, բիայնական աստղագետները հաղթանակ են կանխագուշակել իրենց զորքի համար և շահել ճակատամարտը: Ուրեմն, դժվար չէ կռահել, որ հնում համաստեղություններն աստվածների աստեղտներ հռչակելը կապված է եղել աստղաբաշխական որոշակի հաշվարկների հետ, որոնց մասին, ցավոք, առայժմ ոչինչ ստույգ չենք կարող ասել՝ աղբյուրների սակավության պատճառով:

Դառնանք Դեմետրի և Գիսիանեի երեք որդիներին, որոնցից ավագը Հովհան Մամիկոնյանի երկում Կուառն է, իսկ ռուսական ավանդության մեջ՝ Կիյը: Հայագիտության մեջ ընդունված է, որ Տարոնի Կուառի անունը Մհերի դռան բիայնական դիցացանկում արձանագրված է Կուեռա ձևով, որպես 14-րդ աստվածություն՝ Մելարդի և Աթբինի դիցանուններից հետո: Նրան քաղցրահամ ջրերի, ձեռակերտ աղբյուրների պահապանի դեր է վերապահված եղել: Կուեռային աղբյուրներ են ձոնվել Վանա լճի արևելյան ափի մոտ՝ Էրինու երկրում, հյուսիսային ափին՝ Մեծոփա վանքի մոտ, Արծվաբերդի, Եփրատ գետի արևմտյան ափերի մերձակայքում՝ Մելիտեա երկրի շրջակայքում և այլուր[55]: Ս. Հմայակյանը բացի բիայնական Կուեռայի և «Պատմութիւն Տարօնոյ»-ի Կուառի անվանական նույնությունից, մատնանշում է նաև այն հանգամանքը, որ ըստ Հովհ. Մամիկոնյանի, այս աստծո պաշտամունքը հիմնված է եղել Տարոնի Պալունիք վայրում, իսկ բիայնական արձանագրություններում Կուեռային աղբյուր է ձոնված եղել Էրինու երկրում՝ այս անդամ Վասպուրականի Պալունիքում: Այսինքն՝ երկու դեպքում էլ պաշտամունքը կապված է եղել Պալա ցեղանվան հետ[56], ինչպես ռուսական ավանդության մեջ են երեք եղբայրներն առնչվում պոլյանական հողին:

Ընդհանուր առասպելաբանության մեջ ջրերի պահապանը, ավանդաբար, վիշապն է: Այդպես է նաև հայկական հավատալիքներում: Օրինակ՝ Մուշում, Ալաշկերտում ջուր չլինելու ժամանակ ասում էին. «Վիշապն ի չոքի ջրի վրին»[57]: Հայտնի է, որ բիայնական Մինուա արքան պատմում է

---

[53] Ս. Հարությունյան. Հայ ժողովրդական հանելուկներ. Երևան, 1965, էջ 16:

[54] Այս մասին տես А. Я. Гуревич. Представления о времени в средневековой Европе — В кн.: "История и психология". М., 1971, с. 159-164.

[55] Ս. Հմայակյան. Կուեռա-Կուառ աստվածությունների պաշտամունքը..., էջ 152-154:

[56] Նույն տեղում, էջ 160:

[57] Ա. Ղանալանյան. Առածանի. Երևան, 1960, էջ 328:

Ուրմիա լճի մոտ կառուցած մի աղբյուրի մասին, որն այսօր էլ հոսում է և տեղացիներին ծանոթ է «Էժդահա բուլակի» (Աժդահակի աղբյուր) անունով[58]: Ըստ Խորենացու, հայոց Տիգրան արքան Աժդահակ վիշապին սպանելուց հետո նրա սերունդներին (մարերին) տարագրում է Գողթան գավառ, որոնց Գողթան երգիչները «վիշապազուններ» են կոչում[59]: Պատմականորեն այստեղ են գտնվում նաև բիայնական արձանագրություններից հայտնի Կուարզանի երկիրը և համանուն ցեղը, որը, ըստ Ս. Հմայակյանի, «վիշապազուն» բառի տարբերակն է[60]:

Արևելագիտության մեջ ընդունված է, որ Կուեռայի զուգահեռը վրացական Կվիրիան է[61], պտղաբերության հետ կապված մի աստվածություն, որը Վրաստանի լեռնաբնակների երգերում գովերգվում էր որպես երկնքի և երկնային ջրերի տեր: Նրան էին աղոթում անձրևի համար, անցկացնում էին գիշերային հսկումներ և վաղ գարնանային տոնախմբություններ կազմակերպում[62]: Մ.թ.ա. շուրջ 2000 թ., երբ գարնանային օրահավասարի կետը Խոյ համաստեղությունում էր գտնվում, աստղային երկնքում երկնային ջրերի տեր կարող էր ընկալված լինել միմիայն Կարիճ համաստեղությունը, որն Անանիա Շիրակացին «Կոր» ձևով է ավանդում[63]: Միջագետքում էլ կենդանաշրջանի Մարդակարիճն անձրևների շրջանի սկիզբն է խորհրդանշել[64]:

Մհերի գռան գիցացանկում Կուեռային նախորդող Աթբինի աստվածության անվան հիմքում բիայնական atibi - «10 հազար» թվականն է ընկած[65], որը, ամենայն հավանականությամբ, հնչել է «աթիվի» ձևով: Եթե գիցանունը կարդալու լինենք Աթվինի, ապա նա շատ կհիշեցնի իրանական Աթվյա աստվածությանը, որն Ավեստայում Աժի-Դահակա վիշապին սպանող 3-րդ հերոս Թրաետաոնայի հայրն է՝ հետագա աղբյուրներում անվանակոչված Աթիբին[66]: Հետաքրքիր է, որ Խորենացին, Աժդահակի մասին խոսելիս, հավելում է «Բյուրասպի» մակդիրը, որը պահլավերեն 10 հազար ձի է նշանակում, իսկ «Աժդահակ»-ը, ըստ Խորենացու, մեր լեզվով՝ վիշապի իմաստն ունի: Պատմահայրը Բյուրասպիին ճանաչում է հունականացված «Կենտավրոս Պյուռիդա» անվամբ[67], ուր անզեն աչքով տեսանելի է հայերեն «բյուր»՝ 10 հազար թվականը: Կենտավրոս համաստեղությունն աստղային երկնքի հարավային կիսագնդում Կարիճի (Աժդահակի) և

---

[58] Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, Վանի թագավորության պետական կրոնը. Երևան, 1990, էջ 51:

[59] Խ ո ր ե ն ա ց ի, Ա, Լ:

[60] Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության..., էջ 53-54:

[61] Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Կուեռա-Կուառ աստվածությունների պաշտամունքը..., էջ 165:

[62] МНМ, т. I, с. 631.

[63] Ա. Գ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Անանիա Շիրակացու մատենագրությունը («Ցաղագս կենդանատեսակաց»). Երևան, 1944, էջ 328–329.

[64] МНМ, т. II, с. 515.

[65] С. Г. А м а я к я н. Об урартском божестве Атбини.— ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ. Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական V կոնֆերանս (Զեկուցումների թեզիսներ). Երևան, 1982, էջ 247: И. М е щ а н и н о в. Аннотированный словарь урартского (биайнского) языка. Л., 1978, с. 67-68.

[66] МНМ, т. I, с. 121.

[67] Խ ո ր ե ն ա ց ի, էջ 90-93:

Կշռքի անմիջական հարևանությամբ է տեղ գրավել: Հայերին հայանի է եղել Մարդաձի անվամբ[68]: Հունական դիցաբանության մեջ խորհրդանշել է Կենտավրոս Քիրոնին: Բայց Քիրոնին է խորհրդանշել նաև կենդանաշրջանում Կարիճին հաջորդող Աղեղնավոր մարդաձին: Աստղային հին քարտեզներում երկուսն էլ աչտեակիր են. Կենտավրոսը խոցում է Գայլ համաստեղությանը, Աղեղնավորը՝ Կարիճին[69]: Հայկական անշարժ, ալիշանյան բնորոշմամբ՝ «Արբազան» տոմարի համաձայն[70], աղթարական նշաններում Աղեղնավորի տեղում, որը բաժին է ընկնում Տրե ամսին, պատկերված է ոչ թե Մարդաձի, այլ աղեղնակիր մարդառյուծ, որը նետով խոցում է իր պոչ-վիշապին: Այս համաձուլվածքում միանգամից երեք համաստեղության պատկերի ենք ականատես լինում. մինչև դոտկատեղը՝ մարդ թագակիր համաստեղությունն ինքը՝ Աղեղնավորն է, նրա առյուծ մարմինը՝ Առյուծ համաստեղությունը, վիշապային պոչը՝ Կարիճը: Աղեղնավորը, որը եթե հայոց դպրության աստված Տիրն է (Տրեն), ապա իր դպրության գործառույթով միանգամայն նույնանում է Քիրոնի հետ, ով իր մեծաքանակ աշակերտներին՝ Հերակլեսին, Պելևսին, Օրփեոսին և այլոց բազմակողմանի դիտելիքներ էր հաղորդում: Առյուծի և իր պոչ-վիշապի կոիվը շուրջ 4000 տարի առաջ միանգամայն տրամաբանվել է աստղային երկնքի տեսարանով. երբ Առյուծին պոչի նման հետևող Կարիճ-Վիշապի աստղերն իրենց բարձրակետին են հասել՝ Առյուծի աստղերն անհետացել են տեսադաշտից՝ «իջնելով» հորիզոնից ներքև: Այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ Կարիճը կռվեց և հաղթեց Առյուծին՝ նրան իջեցնելով հանդերձյալ աշխարհ: Աստղադիտական-տոմարական այս պատկերացումն արտահայտված է նաև իրանական Պերսեպոլիսի որմնաքանդակներից մեկում, ուր սպանվող առյուծը թևավոր է, ինչը ցույց է տալիս նրա երկնային բնույթը՝ Պոչ-վիշապի փոխարեն կարիճի պոչ է պատկերված: Թագակիր աղեղնավորին փոխարինելու է եկել Դարեհ արքան, որի քաջությունը ցույց տալու համար փորագրիչը նրան ոչ թե առյուծի դաշնակից է ներկայացրել, այլ թշնամի[71]:

Եթե ամփոփելու լինենք բիայնական մարդաձի աստվածության մասին մեր պատկերացումները, ապա պարադոքսալ խնդրի առջև կկանգնենք. մի կողմից նա աղերսվում է Կարիճ համաստեղությանը (Աժդահակն է՝ ըստ Խորենացու), մյուս կողմից Կենտավրոսն է՝ դարձյալ ըստ Խորենացու: Տպավորությունն այնպիսին է, որ, կարծես, մեկը մյուսի էմանացիան է: Հնարավոր է, որ այս աստվածությունը կապված է եղել ձիաբուծության հետ, որի անվան 10 հազար թվականը ձիերի մեծաքանակությունն է ցույց տվել: Կարիճ-Վիշապը և Կենտավրոսն առասպելաբանորեն միմյանց հետ ամենասերտ աղերսների մեջ են գտնվել, ինչպես աստղային երկնքում է Մարդաձիու կերպարանքն ամենամերձավոր դիրք գրավում Կարիճ համաստեղության նկատմամբ: Խորենացին էլ, երբ խոսում է Բյուրասպիի և վիշապի (գևի կամ սատանայի ճտի) հետ ունեցած փոխհարաբերության

---

[68] Բ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Հայ աստղագիտության պատմություն. Երևան, 1964, էջ 212

[69] А. Б о н о в. Նշվ. աշխ., էջ 157, 158–160, 163–164:

[70] Ղ ե ո ն դ Ա լ ի շ ա ն. Յուշիկք Հայրենեաց Հայոց. հ. I, Վենետիկ, 1869, էջ 88:

[71] Р. Ф р а й. Наследие Ирана. М., 1972, ил. № 71.

մասին, հայտնում է, որ երբ սատանայի ճուտը համբուրում էր Բյուրասպի ուսերը՝ այնտեղից վիշապներ էին ծնվում[72]: Այս դեպքում վիշապավոր Բյուրասպի-Կենտավրոսի պատկերը համընկնում է հայոց Աղեղնավոր համաստեղության խորհրդանիշ մարդաձուծ աղեղնավորի կերպարին, միայն թե այստեղ վիշապը ոչ թե աղեղնավորի ուսերից է աճում, այլ առյուծիրան պոչի տեղում: Խորենացին ավելացնում է նաև, որ Բյուրասպի Աժդահակն իր փորի համար մարդիկ էր սպառում[73]: Այս անգամ «Բյուրասպի Աժդահակ» անվան ներքո ըմբռնվում է վիշապը, որն ընդհանուր առասպելաբանության մեջ մարդկային զոհեր (կույսեր) է պահանջում: Ակնհայտ է, որ այստեղ գործ ունենք առասպելական մարդաձիու և վիշապի, ապա նաև՝ Կենտավրոս և Կարիճ համաստեղությունների ինչ-ինչ գործառույթների եթե ոչ նույնացման, ապա գոնե աղերսակցության հետ:

Առայժմ անհասկանալի է մնում, թե ինչպես է Տրիտա Աթվյա աստվածությունը դաբձել երրորդ հերոս Թրաետաոնայի հայրն իրանական դիցաբանության մեջ: Սակայն հայտնի է, որ իրանցիները միասնական են ըմբռնել Տրիտա Աթվյա և Տրիտա Ապտյա դիցանունները[74], ինչը թույլ է տալիս ենթադրել, թե լեզվաբանական տեսակետից գործ ունենք սոսկ դրավորության երևույթի հետ: «Տրիտա Ապտյա» նշանակում է Ջրային Տրիտա, իսկ նա նույնացվում է հնդաբրիական երրորդ եղբայր Տրիտային[75], որը Ռիգվեդայում նստած է ջրհորի հատակում և վկայակոչում է իր ազգակցական կապը Տրիտա Ապտյայի հետ[76]: Հավանաբար, նույն կերպարին է աղերսվում նաև հունական Տրիտոնը, որի ապարանքը ծովի հատակում էր, իսկ ինքը գոտկատեղից ներքև վիշապի պոչով էր պատկերվում[77]: Ջրային կապը մատնանշում է ոչ միայն բիայնական Կուեռա և Տարոնի Կուառ վիշապ աստվածություններին՝ ջրերի պահապանին, այլև նոր գիծ է ավելացնում Աթբինիի կերպարին: Տարոնի Իննակնյա պաշտամունքային վայրն էլ առնչվել է աղբյուրների հետ («ինն աղբյուր») և կոչվել է «բարեբուխ»: Այստեղ աղբյուր է հոսել, որը բուժիչ հատկություններ ուներ[78]: Հունական դիցաբանությունից հայտնի է, որ կենտավրոս Քիրոնն էլ իր քարայրում ոսկե տավզով գովերգում էր Թասոի ընդերքում գտնվող կյանքի աղբյուրը, իսկ ամեն օր, խնջույքից առաջ, իր աշակերտներին ուղարկում էր աղբյուրի ջրում լողանալու[79]: Տասը հազար թվականի առկայությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Աթբինիի պաշտամունքի հետ է կապված եղել նաև Սասունում իր բուժիչ աղբյուրներով հռչակված Բյուրակն («10 հազար աղբյուր») տեղանքը:

Բիայնական դիցարանում Աթբինին նախորդում է Կուեռային, իսկ «Պատմութիւն Տարօնոյ»-ում, ըստ երեք եղբայրների թվարկման կարգի,

---

[72] Խ ո ր ե ն ա ց ի, էջ 90–93:

[73] Նույն տեղում:

[74] МНМ, т. I, с. 526.

[75] Там же.

[76] Ригведа. Избранные гимны. Перевод, комментарии и вступительная статья Т. Я. Елизаренковой. М., 1972, с. 239-242.

[77] МНМ, т. II, с. 526.

[78] Յ ո վ հ . Մ ա մ ի կ ո ն ե ա ն. Նշվ. աշխ., էջ 124, 41:

[79] А. Б о н о в. Նշվ. աշխ., էջ 158–159:

Կուառին հաջորդում է Մեղտեսը: Աթբինիին նախորդում է Մելարդին, իսկ Կուառին՝ Հոռը, որոնց մասին կխոսենք քիչ հետո: Ըստ հերթականության ստացվում է հետևյալ պատկերը. Մելարդի - Աթբինի – Կուեռա՝ *մի կողմից,* Կուառ – Մեղտես – Հոռ՝ *մյուս կողմից: Կիևի հիմնադրման մասին ռուսական ավանդության մեջ երեք եղբայրների անունների թվարկումը համընկնում է Տարոնի երեք եղբայրների հաջորդականությանը՝* Կիյ *(Կուառ)* – Շչեկ *(Մեղաես)* – Խորիվ *(Հոռ)*[80]*:*

Աստղային երկնքում, խավարածրում, ըստ Արևի «շարժման» ուղղության, իրար են հաջորդում Կչեռքն ու Կարիճը, որոնց միջև՝ հարավային կիսագնդում, Կենտավրոսն է: Այսինքն՝ տեսնում ենք այն հերթականությունը, որն արձանագրված է Մհերի դռան դիցացանկում՝ Կուեռա-Կարիճը հաջորդում է Աթբինի-Կենտավրոսին:

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք այս աստծո բնութագրական գծերը, ապա հետևյալ պատկերը կունենանք.

1. Մարդաձի է, ինչը խորհրդանշում է նրա կապը կենդանական աշխարհի՝ վայրի բնության, գուցեև ձիաբուծության հետ:

2. Առնչություն ունի աղբյուրների հետ, և եթե նույն իրանական Տրիտա Ապտյա և հունական Տրիտոն աստվածությունն է, ապա բնակատեղին ջրհորի (աղբյուրի) և, առհասարակ, ջրային ավազանի հատակն է:

3. Ադերսվում է կարիճի, վիշապի, Աժդահակի կերպարին, քանի որ, ըստ Խորենացու, «մարդկանց է սպառում»:

4. Իմաստուն է և ունի բազմաթիվ աշակերտներ, որոնց համակողմանի գիտելիքներ է հաղորդում:

5. Եթե հնարավոր համարենք, որ Մեղտես անվան «մեղ» բաղադրիչը հնդեվրոպական նախալեզվի **mel՝ սև դույնի գաղափարն է արտահայտում, ապա նրա անունը կարելի է «սևատեսք» հասկանալ: Սա համապատասխանում է Հովհան Մամիկոնյանի վկայությանն այն մասին, թե Իննակնյա վայրի պաշտամունքի սպասավորներն էլ սևատեսք էին:*

---

[80] *Կիև անունով քաղաք Ռուսաստանում մի քանիսն են եղել (*Н. М а р р. *Նշվ. աշխ., էջ 279), ուստի, անհավանական չէ, որ այս առասպելը Կիևյան Ռուսիայում լայն աշխարհագրություն է ունեցել: Հնարավոր է նաև, որ դրա ղուդահեռ հայկական տարբերակն էլ միայն Տարոնով և Սասունով չի սահմանափակվել: Այսպիսի տեսակետ հայտնելու համար մեզ հիմք է տալիս Երևանի տարածքում երեք բլուրներից բաղկացած Եռաբլուր՝ կոչվող տեղանքը՝ Կարմիր Բլուրի դիմաց: Ռուսական ավանդությունն ասում է, թե երեք եղբայրները նստեցին երեք լեռների վրա և ապա ի պատիվ իրենց ավագ եղբայր՝ Կիյի (հայկական Կուառի)՝ քաղաք հիմնեցին: Հայտնի է, որ Զվարթնոցի արձանագրությունում հիշատակված Կուառլինի հովիտը, որ Կարմիր Բլուրի և Էջմիածնի միջև ընկած դաշտն է, ինչպես նաև Արգիշթի I-ի սարեգրությունում վկայված Կուառզանի տեղանունը Ն. Վ. Հարությունյանը կապել է Կուեռա դիցանվան հետ (*Н. А р у т ю н я н. Биайнили (Урарту). Ереван, 1970, с. 352*): Հետևաբար, չի բացառվում, որ Կուեռայի պաշտամունքը տարածված է եղել նաև Կարմիր Բլուրին հարող տարածքներում: Հնարավոր է, որ այդ պաշտամունքային գոտում է գտնվել ոչ միայն Կարմիր Բլուրի Թեյչեբաինի ամրոցը, այլև Արին Բերդ բլրի վրա Երևանի հնության վկայադիրը կրող՝ Արգիշթի I-ի հիմնած Էրեբունին, որը տեսականորեն կարող էր նախապես Կուեռային նվիրված լինել: Հետաքրքիր է, որ բլուրների վրա Հռոմ քաղաքը հիմնած Ռոմուլոսն ասավածացված է եղել Կվիրին անունով: Հին հեղինակները «Կվիրին» բառը ծագած են համարել սաբինական* Cures *քաղաքից կամ* quiris *աշտե բառից: Ենթադրվում է, որ Կվիրինը հողագործության և պտղաբերության հետ կապված աստվածություն է եղել, քանի որ Հռոմում Կվիրինի քուրմը մասնակցում էր երկրագործական աստվածների պաշտամունքին նվիրված տոնակատարություններին* (*А. Н е м и р о в с к и й. Идеология и культура раннего Рима. Воронеж, 1964, с. 97–98*):

Այս բոլոր հատկանիշները հայկական հրաշապատում հեքիաթներում արտահայտված ենք տեսնում Սև արարի, Օխեչի, Օխայի, Օխայ բաբիի կերպարում: Նրա ապարանքը գտնվում է ջրհորի կամ աղբյուրի հատակում, որն «Անտակ» է կոչվում: Իմաստուն է և ունի բազմաթիվ աշակերտներ, որոնց «փեշակ» է սովորեցնում, հատկապես՝ կենդանական կերպարանք առնելու ունակություն: Սովորեցնելուց հետո բոլորին սպանում է, որպեսզի իր հաղորդած գիտելիքները չտարածվեն: Նրա մոտ ուսանած հերոսը փրկվում է անգետ ձևանալու շնորհիվ: Հերոսի սիրած կերպարանափոխությունը ձին է, որի տեսքն ընդունում է շուկայում վաճառվելու և հորն ապրուստի միջոց տրամադրելու համար: Այս ունակությունն էլ, բնականաբար, նա ձեռք է բերում Օխայ բաբիի մոտ ուսանելու ընթացքում[81]:

Դառնանք Կշեռքի, բիայնական Մելարդիի, Տարոնի Հոռի և ռուսական Խորիվի աղերսակցության խնդրին: Հայանի է, որ Մելարդի դիցանունը հայերեն «Մեղարդ» բառն է[82], քանի որ այդպես է անվանված Լուսինը Երեմիա Մեղրեցու բառարանում[83]: Իսկ Մելարդիի անունը գրելիս, սեպագրերում գործածվել է ^{D}SIN գաղափարագիրը, որը միջագետքյան Լուսին աստվածության անունն էր: Բիայնական աղբյուրներում էլ Մելարդիի խորհրդանիշը կիսալուսինն է համարվում[84]: Եթե կրոնական տոների համար սահմանված հայկական հնագույն անշարժ տոմարի առաջին ամիսը հաշվենք Արեգից, որը համապատասխանում է Խոյ համաստեղությանը, ապա, Կշեռքին հասնելով, կունենանք Հոռի ամիսը, որն էլ «Պատմութիւն Տարօնոյ»-ի երեք եղբայրներից Հոռի, իսկ ռուսական ավանդության Խորիվի անունն է: Հայկական անշարժ տոմարի համաձայն, աղթարական նշաններում Հոռիին համապատասխանում է ծալապատիկ նստած աղջկա պատկերը, որի աջ ու ձախ կողմերում կշեռքի երկու նժարներն են, յուրաքանչյուրում մեկական կիսալուսին՝ լուսնի աճման և նվազման փուլերը: Աղջիկն ինքը, թերևս, լուսնի լիալուսին փուլն է ներկայացնում: Նրա կարմիր զգեստը սպասկերազարդված է ասպղերով: Կարելի է կարծել, որ Հնում Լուսնի աստեղտուն է համարվել ոչ միայն Կույս համաստեղությունը, այլև Կշեռքը: Կա սակայն մի անհամապատասխանություն. Մհերի դռան դիցացանկում Մելարդին արական աստվածների շարքին է դասվում, իսկ Աղթարքում իգական կերպավորում ունի: Բայց այս անճշտությունը կարելի է բացատրել հայկական ավանդությամբ, ուր Լուսնի սեռը, ինչպես նաև Արևինը, փոփոխական է: Լուսինը ոչ միայն տղա է, այլև՝ աղջիկ, որն իր եղբոր՝ Արևի հետ պայմանավորվում է գիշերները դուրս գալ՝ չար աչքից չզարկվելու համար[85]: Կշեռքում է հնում գտնվել աշնանային օրահավասարի կետը[86], երբ ցերեկն ու գիշերը կշեռքի հավասար նժարների նման երկու հավասար մասի են բաժանվում, այնուհետև ցերեկը սկսում է կար-

---

[81] ՀԺՀ. հ. XI, էջ 204, հ. IV, էջ 415, 419, հ. II, 1959, էջ 199, հ. XIII, էջ 119, 237:

[82] Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության..., էջ 48-50:

[83] Ե ր ե մ ի ա Մ ե ղ ր ե ց ի. Բառգիրք հայոց (քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի). Երևան, 1975, էջ 212:

[84] Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության..., էջ 48-50:

[85] «Հանգես գրականական և պատմական». գիրք I. Մոսկվա, 1888, էջ 372:

[86] Ս. Ն ե ր ս ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 92:

ճանալ, գիշերը՝ երկարել: Օրերն աստիճանաբար մթնում են: Աղթարքում էլ երկու հավասար կիսալուսիններ կցող աղջիկը հենց աշնանային օրահավասարի կետն է մարմնավորում հին օրացուցային պատկերացումներում: Հատկանշական է, որ երեք եղբայրներին վերաբերող հայկական բազմաթիվ հրաշապատում հեքիաթներում ակնհայտորեն արևային հատկանիշներով օժտված երրորդ եղբայրը վիշապին հետապնդելիս իջնում է հոր կամ ջրհորը, հասնում է «Անտակ» կոչված մի վայրի (ինչպես Օխայ բարիի աշակերտը) և այնուհետև ընկնում Մութ աշխարհ[87]*: Այսինքն՝ «Անտակը» հանդերձյալ աշխարհն է: Հովհան Մամիկոնյանի երկում էլ Տարոնի Իննակնյա վայրը կոչվում էր «դրունք դժոխոց» կամ «դուռք մահու»*[88]*, այսինքն՝ հանդերձյալ աշխարհի դռներ: Եվ թվում է, որ «Պատմութիւն Տարօնոյ»-ի հեղինակը գիտակցաբար կամ անգիտակցաբար խոտր է խառնել «անտակաց» և «հնդկաց» բառերը՝ Դեմետրին, Գիսանեին ու նրանց մեհյանների քրմերին հնդիկներ հորջորջելով: Այլապես անհասկանալի է մնում, թե ինչու՞ Գրիգոր Լուսավորչի դեմ կռվող քրմերին Տարոնում հաջողվում է շուրջ 7 հազարանոց զորք հավաքել (իհարկե՝ ոչ հնդիկներից), ինչու՞ թագավորական բանակի 700 հայ զինվոր անցնում է քրմերի կողմը և թե ինչու՞ Արձան քրմապետը հարձակվողներին «հայրենի աստվածների ուրացողներ» է անվանում*[89]*: Այդ աստվածներն, իհարկե, խորթ չէին Հայկական լեռնաշխարհի բնիկներին և գալիս էին դեռևս Վա-*

---

[87] *ՀԺՀ. հ. I, էջ 23, նաև Գ. Ս ա ր ո ո յ ա ն. Հայոց գիցարանի գերադույն եռյակը. Երևան, 2004, էջ 4-37:*

[88] *Յ ո վ հ . Մ ա մ ի կ ո ն ե ա ն. Նշվ. աշխ., էջ 36, 99:*

[89] *Նույն տեղում, էջ 79-85, 90: Հովհան Մամիկոնյանի այն հայտարարությունը, թե հնդիկներն ու պարսիկներն են Իննակնյա կոչել Տարոնի սրբավայրը (Նույն տեղում, էջ 41, 36), հարկ է գիցաբանական տեսակետից հասկանալ: Դեմետրն ու Գիսանեն Լուսինն ու Արևն են, բնրև երկվորյակներ: Միհր-Միթրայի պաշտամունքը բաց հայտնի էր թե՛ հնդիկներին, թե՛ պարսիկներին: Իրանական ավանդույթներում նա «Մահ» էր անվանվում, իսկ Լուսինն և համարժեք ընկալվում Արևին* (Б. В а н - д е р В а р д е н. Пробуждающаяся наука II. Рождение астрономии. М., 1991, с. 163)*: Հնդարիները Միթրային էին կանչում արևածագին և ասում էին, թե Արևը նրա աչքն է* (МНМ II, с. 157)*: Նույն պատկերն էր նաև հույների մեջ, որոնք Ապոլոնին և Դիոնիսոսին մեկը մյուսի զրկաործման մեջ էին տեսնում, որպես երկնքի Արև և ստորերկրյայի Լուսին: Ապոլոնը նույնացվում էր Ցանեսին* (А. Л о с е в. *Նշվ. աշխ., էջ 325–327, 580), իսկ վերջինիս որդեսայանները Միհր էին կոչում* (Б. В а н д е р - В а р д е н. *Նշվ. աշխ., էջ 181–182): Միհր էր կոչվում նաև Դիոնիսոսը* (А. Л о с е в. *Նշվ. աշխ., էջ 174): Հայերի մեջ նա հայտնի էր Սպանդարամետ անվամբ, որպես ստորերկրայքի հետ կապված աստվածություն (Ա լ ի շ ա ն. Նշվ. աշխ., էջ 307-308): Սպանդարամետին Կ. Կոստանյանցն իրավամբ համեմատել է Դեմետրայի հետ, որը ստորերկրայքի աստվածուհի էր (Կ. Կ ո ս տ ա ն ե ա ն ց. Հայոց հեթանոսական կրոնը. Վաղարշապատ, 1879, էջ 30-31): Հունական դիցաբանության մեջ էլ Դիոնիսոսը մանկության շրջանում կանացի զգեստների մեջ է պատկերացվել* (Р. Г р е й в с. *Նշվ. աշխ., էջ 73): Ըստ Հերոդոտոսի, պարսիկները Միհրին երկրպագում էին, քանի որ Միթրա էին անվանում Աֆրոդիտե Ուրանիային (Հ ե ր ո դ ո տ ո ս. Պատմություն ինը գրքից. Երևան, 1986, I, 131): Հայերի մեջ Միհր - Դիոնիսոսը երկսեռ լինելուց բացի, կարող էր նաև Անահիտ - Դեմետր (Պերսեփոնե) — Լուսնի որդին լինել. ինչպես հույներն էին նրան Սեմելե (Սելենե) - Լուսնի կամ Դեմետրի, ինչպես նաև Պերսեփոնեի որդի ճանաչում* (А. Л о с е в, *Նշվ. աշխ., էջ 164): Հարկ է ասել, որ Դիոնիսոսի ներկայությունը Տարոնի Իննակնյա պաշտամունքային վայրում նկատել է նաև Է. Պետրոսյանը* (Э. П е т р о с я н. Боги и ритуалы Древней Армении. Ереван, 2004, с. 111-112)*: Ինչ վերաբերում է սրբավայրի Իննակնյա անվանը, ապա այն մեզ ավելի շուտ հելլենական աշխարհ է տանում իր ինը մուսաների առաջնորդ Դիոնիսոս-Ապոլոնյան պաշտամունքով, որի ակունքները գիտությունը ցայսօր Փոքր Ասիայում է որոնում:*

նի թագավորության կամ ավելի վաղ ժամանակներից, երբ բաժանվում էր աստղային երկինքը և տոմարական հաշվարկներ էին կատարվում:

Ամփոփելով, ասենք, որ «Պատմութիւն Տարօնոյ» - ում վերարտադրված են աստղային տոմարական մի հին առասպելի ուրվագծերը: Մահերի դռան դիցացանկը պետք է որ առավել ամբողջական պահպանած լինի այդ տոմարը՝ իր աստղ-համաստեղություն-աստվածությունների շարքով:

О ПРОБЛЕМЕ ПРОИСХОЖДЕНИЯ КУЛЬТА МЕСТНОСТИ ИННАКНЯ В ТАРОНЕ

ГАГИК МАРТОЯН

Резюме

Армянский средневековый летописец Ован Мамиконян в своем труде "История Тарона" рассказывает о том, как индийские князья Деметр и Гисиане, прибыв в Армению, устанавливают культ на горе Карке, в Тароне. В том же месте их потомки в дальнейшем воздвигают статуи идолов Деметр и Гисиане. Исследования показывают, что культ этих двух богов среди армян был связан с созвездиями Луны и Солнца—Девой и Геркулесом. Место поклонения Деметру и Гисиане называлось дверьми "ада" или "смерти", то есть потустороннего мира. Астральная мифология в качестве входа в потусторонний мир признает созвездие Рака (недалеко от Девы), куда в день летнего солнцестояния входит ("умирает") Солнце. Космологическим представлениям языческих армян этот мир был известен под названием Անտակ (Антак — бездонный), следовательно, христианский хронолог мог бы спутать слова հնդկաց (hндкац—индийский) и անակաց (анткац—потустороннего мира), провозглашая Деметра и Гисиане индийскими князьями. Их три сына Куар, Мехтес и Хор являются последующими в Зодиаке за созвездием Девы—Весы и Скорпион, а также ближайшего соседа этих двух созвездий в Южном полушарии звездного неба—Центавр.

ABOUT THE PROBLEM OF THE ORIGIN OF THE WORSHIP PLACE OF ENNAKNEA IN TARON

GAGIK MARTOYAN

Summary

The Armenian medieval annalist Hovhan Mamikonyan in his work <History of Taron> tells about Indian princes Demeter and Gesiane, who come to Armenia and establish a worship on the mountain Karke in Taron. Later on their descendants erect the statues of idols Demeter and

Gesianc in the same place. The researches show that the worship of these two Gods among Armenians has been connected with the Moon and the Sun constellations Virgo and Hercules. The worship place of Demeter and Gesianc was called <the hell> or <death>. that is the Underworld doors. The star mythology considers as an entrance to the Underworld the forerunner of the constellation Virgo in the Zodiak-the Cancer, into which the Sun enters on the day of the summer solstice. That world in the cosmological ideas of heathen Armenians was known as the name of <Antak> (the Bottomless), therefore it is possible, that the Christian chronicler might have confused the words <antkats> (Underworld) and <hndkats> (Indian), proclaiming the princes Demeter and Gesiane, as Indians. Their sons Kuar, Meltes and Hor are the following constellations of Virgo in Zodiak-Libra, Scorpio, as well as their nearest neighbour in Southern hemisphere of the starry sky-Centaurus.